# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3237-Ա « 06 » հոկտեմբերի 2023թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի և «Համախոհ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի հուլիսի 12-ին կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-23/174 ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Ա. Թամանյանի հուշարձանի շրջակա տարածքի բարեկարգման վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից չեն պահպանվել Պայմանագրի 6.5.1 կետով սահմանված աշխատանքների կատարման պահանջները, մասնավորապես՝ համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված նորմերի տեսաձայնագրման սարքերի բացակայություն, որն երկրորդ անգամ կրկնվելու դեպքում առաջացնում է պատասխանատվություն՝ պայմանագրի խզում:

Տվյալ դեպքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից «Համախոհ» ՍՊ ընկերությանը 04.09.2023 թվականին և 18.09.2023 թվականին հասցեագրվել է թիվ 16/160785-23 և 16/170730-23 գրությունները՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված նորմերի տեսաձայնագրման սարքերի բացակայության համար նախատեսված խախտման համար պայմանագրային գնի 10%-ի՝ 959.760 ՀՀ դրամ գումարի տուգանքների առաջադրման վերաբերյալ, Ընկերության կողմից թույլ է տրվել կապալային աշխատանքների Պայմանագրի 6.5.1 կետի աղյուսակի 5-րդ ենթակետով սահմանված աշխատանքների կատարման պահանջների կրկնակի խախտում, որն առաջացրել է պատասխանատվություն՝ Պայմանագրի խզում:

Երևանի քաղաքապետարանը՝ ղեկավարվելով գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 6.5.1 կետի պահանջով՝ միակողմանի /ամբողջությամբ/ լուծել է կնքված Պայմանագիրը:

Պայմանագրի լուծման վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում, սույն թվականի սեպտեմբերի 28-ին և պայմանագիրը սեպտեմբերի 29-ի դրությամբ համարվում է լուծված:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 2-րդ մասով.

1. «Համախոհ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի վրա:

3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441